# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<20>> մայիսի 2021թ. N ՄՈ/158-2021

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱԱՊՐԻԼԻ 21-Ի NՄՈ/128-2020 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N 1791-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը և <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2021 թվականի ապրիլի 27-ի N08-362/444 գրությունը.

ո ր ո շ ու մ   ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի ապրիլի 21-ի <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի փետրվարի 13-ի N ՄՈ/39-2020 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> NՄՈ/128-2020 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
    1) 1-ին կետը լրացնել <<1.1 <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Զուռնաչյանի ամսական աշխատավարձը սահմանել 510.000 (հինգ հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և յուրաքանչյուր ամիս վճարովի ծառայություններից 1 տոկոսի չափով որպես բոնուսային վճար:>> ենթակետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Удостоверительная подпись

X

VERIFIED OCSP 20.05.2021 10:40:37 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230